

Արիստակեսյ որդւոյ նորա՝ յետ խոստովանութեան մահուն իւրոյ, եւ տարան զնա ի Ծոփաց գաւառէ, եւ եղին զնա յեկեղեաց գաւառի ի Թիլն աւանի, ի կալուածս Գրիգորի հաւրն իւրոյ:

ԳԼՈՒԽ Գ.

1 Որ ինչ վասն թագաւորութեանն Խոսրովու՝ որդւոյ Տրդատայ, եւ Վրթանայ մեծի քահանայապետի¹ որդւոյ Գրիգորի:

2 Ապա յետ այսորիկ թագաւորեաց Խոսրով Կոտակ, թռն Խոսրովու, որդի քաջի եւ առաքինւոյն Տրդատայ արքայի: 3 Յաւուրս սորա եկաց եւ եղև քահանայապետ յաթոռն հաւրն, փոխանակ հաւրն իւրոյ եւ եղբաւրն իւրոյ, երեց որդին Գրիգորի Վրթանես: 4 Խաղաղութիւն եւ շինութիւն², մարդաշատութիւն եւ առողջութիւն, պտղաբերութիւն եւ ստացուածաշատութիւն եւ շահեկանութիւն, եւ մեծն աստուածասէր պաշտան ի հաճոյակատարն բարութիւն՝ յամս յաւուրս սոցա աճել բազմացաւ: 5 Լուսաւորեր եւ առաջնորդեր նոցա³ սուրբն Վրթանես իբրեւ զհայր իբրեւ զեղբայրն իւր. իրաւունք եւ արդարութիւն ծաղկեալ էին ի դարունս յայնմ:

6 Չայնու ժամանակաւ երթեալ հասաներ եպիսկոպոսապետն Վրթանես ի մեծն յառաջին ի մայրն եկեղեցեացն Յայոց, որ էր յերկրին Տարաւնու, ուր նշանաւքն եղելաւք կործանեցան բազինք մեհենիցն յայնժամ վաղ եւս առ մեծաւ քահանայապետան Գրիգորի: 7 Սա երթեալ կատարեր անդ, ըստ հանապազ սովորութեանն, զՏեառնն զխաչական զփրկութեանն զպատարազն զոհութեան, զհաղորդութիւն չարչարանաց յիշատակի, զկենդանարարն եւ զազատիչն զմարմին եւ զարիւն աստուածորդոյն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: 8 Քանզի այնպէս իսկ սովոր էին եպիսկոպոսապետքն Յայոց, հանդերձ թագաւորաւք եւ մեծամեծաւքն, նախարարաւքն եւ աշխարհախումբ բազմութեամբ պատուել զնոյն տեղիս, որ յառաջ էին տեղիք պատկերաց կռոցն, եւ ապա յանուն աստուածութեանն սրբեցան, եւ եղեն տուն աղաւթից եւ տեղի ուխտից ամենայն ումեք: 9 Մանաւանդ յայն ի գլխաւոր տեղին յեկեղեցին ժողովել ի յիշատակ սրբոցն՝ որ էին անդ, կատարել անդ ամի ամի եւթն անգամ. որք զնոյն ունէին սովորութիւն առաւել եւս ի մեծի մարգարեարան մատրանն Յովհաննու: 10 Սոյնպէս եւ յառաքելարանս տեառնաշակերտացն, սոյնպէս եւ ի վկայարանս մարտիրոսացն ամի ամի ժողովեալք, զաւր տաւնին յիշատակի նոցա վարուց գործոց կենաց քաջութեան խմբեալ՝ ցնծային: 11 Իսկ դէպ իմն լիներ ի ժամանակին՝ յորում մեծ

1 Քահանայապետի՝ *յամենայն օրինակս*

2 *Օրինակ մի՝ խաղաղութեամբ եւ շինութեամբ*

3 *Յօրինակի միում՝ լուսատու էր եւ առաջնորդ նոցա*